Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի
2018 թ. հոկտեմբերի 15 -ի N 238 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի արտաքին լուսավորության համակարգի վերակառուցման աշխատանքների իրականացումը պայմանավորված է առկա համակարգի անմխիթար վիճակով և քաղաքի գլխավոր փողոցն ավելի բարեկարգ դարձնելու անհրաժեշտությամբ:
2.	Ծրագրի նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից
3.	Բարեգործը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
4.	Ծրագրի կատարողը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղ. Տաշիր, քաղաքաշինության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	171,201,930 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզ, Տաշիրի քաղաքային համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2018 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի արտաքին լուսավորության համակարգի վերակառուցման աշխատանքներ՝ 171 201 930 դրամ Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալվում են Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի արտաքին լուսավորության համակարգի վերակառուցման աշխատանքների դիմաց հարկային արտոնություններ՝ 171 201 930 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Լոռու մարզ, Տաշիր քաղաքի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈՓՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ